ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
15 հոկտեմբերի 2018 թվականի N 248-Ա

«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի «3» կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շ.Հովսեփյանի դիմումը՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. 2018թ. հոկտեմբերի 16-ից լուծել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շուշանիկ Հովսեփյանի հետ 2018 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված N 24 աշխատանքային պայմանագիրը:
2. 2018թ. հոկտեմբերի 16-ից «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները վերապահել նույն դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արփինե Մկրտչյանին, մինչև տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆԱՉ Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

2018թ.հոկտեմբերի 15
ք. Կապան